

ԳՄ ԲԷԹ ԹԷ ԼՈՒՍԱՄՈՒՏ

(*Смр. Рук. 1946* [т. 6-7, т. 149])

ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՒՍԱՄՈՒՏԸ ԲԻԻԶԱՆԴԱԿԱՆ
ՇԻՆՈՒԱԾՔԻՆ ՎՐԱՅ:

Ուրեմն այն ինչ որ առ հասարակ կը կոչենք հայկական գմբեթ, իրականին մէջ լուսամուտ մըն է։ Այս լուսամուտը սակայն՝ զերազանցապէս կը յարմարի հայկական շինուածաձեւին, շէնքին համեմատութիւնն երբուն և հայկական որմնադրական օթեակի տակդէն կանոնին։

Հետաքրքրական է այժմ՝ տեսնել թե այս
լուսամուտը ինչպես գործածուեցաւ հայկա-
կան զպրոցէն ազգուած ճարտարապետու
թիւններու մէջ, ի մասնաւորի Բիւզանդա-
կան ճարտարապետութեան մէջ:

Իրողութիւններ կան, որոնք նոյն իսկ
ակադեմական տիպաւորութեամբ տուած բոլոր
հեղինակութեամբը, կարելի չէ ժխտել:
Այս իրողութիւններէն մէկն է Բիւզանդա-
կան ճարտարապետութեան կրած ազդեցու-
թիւններէն ոմանք, որոնք հայկական դպրո-
ցէն կու գան: Այդ ազդեցութիւններէն մէկն
է հայկական լուսամուտը:

Արեւմտեան գիտունները զարմանալի տրամաբանութեան ձեւ մը ունին։ Այսպէս, օրինակ, անոնք կ'ընդունին որ մէկ հատիկ բիւզանդացի իշխանուհի մը որ գերմանական կայսրութեան գահէր կը բարձրանայ, բաւական կ'ըլլայ այս կամ այն նորութիւնը բիւզանդիոնէն արեւմուտք մտցնելու (սլա-

1. Մի միայն 802-էն մինչեւ 867, երկու արաբներ, մէկ հայ, մէկ ֆոնիզիացի կայսր կ'ըլլային յաջորդաբար փոխարէն մէկ յոյնի:

տառաքաղի գործածութիւն)։ Բայց այս մի
և նոյն գիտունները չեն կրնար ընդունիլ որ
ամբողջ հայ կայսրերու փառաւոր գերդաս-
տան մը, չընկալատուած ոչ նուազ արժէ-
քաւոր ուրիշ հայ պետական անձնաւորու-
թիւններէ և արհեստաւորներէ՝ ի վիճակի
եղած ըլլայ Բիւզանդիոն մտցնելու տոհմային
ինչ ինչ սովորութիւններ և շինուածակեր-
պեր։

Այս կող տրամաբանութիւնը, արեւմտեան
գիտուններու մօտ; անկից առաջ կու գայ որ
անոնք բոլորովին կ'անգիտանան Հայաս-
տանի բարձրաւանդակին վրայ գոյութիւն
ունեցած քաղաքակրթութիւնը:

Սակայն ոմանց տգիտությունը արգելե մը
չէ որ հայկական՝ ճարտարապետական
տարածած ազդեցութիւնները իրողութիւն
ըլլալէ դադրին:

Երբ աչք մը նետահեք Բիւզանդիոնի վրայ,
պիտի տեսնենք՝ թէ հակառակ Պիւրիներու
և Վլասիլիի ֆնէրու պնդումներուն, բիւզան-
կան կայսրութիւնը, մասնաւանդ իր զօրու-
թեան ամէնէն փայլուն շրջանին եղաւ ա-
ռաւելապէս արեւելեան կայսրութիւն մը
քան «հռովմէական կայսրութիւն», հոգ-
չէ թէ պիտակը միշտ ալ մնացած ըլլայ
որպէս «հռովմէական»։

Ոչ միայն այս կայսրութիւնը կազմող ժողովուրդները մեծ մասով արեւելքցիներ էին, ոչ միայն կայսրերու մեծամասնութիւնը արեւելքի եղաւ ⁽¹⁾ և կամ պետական

Կախերական զերգաստաններէն ՀերակԼեանները
(Հայեր), իստարացիները, փուլգականը, մակկոնացի-
ները (Հայեր), տիւքանները, կոմնէները, ամբողջութեամբ

կազմը առաւելապէս արեւելքցիներէ կը բաղկանար, այլ նաեւ հոն տիրող մտայնութիւնը, կայսեր վերագրուած դերը, անոր ըմբռնումը՝ բոլորովին արեւելեան եղաւ։ Նոյն իսկ բիւզանդական գեղարուեստին մէկ կարեւոր մասը կը ցոլացնէ, մասնաւորաբար անդուգական մօզաիքներու մէջէն, արեւելեան ըմբռնումը անշարժ ու քարացած վեհափառութեան մը։

Հոովմէական պիտակով գերազանցապէս արեւելեան այս կայսրութեան մէջ, հայերը բերած են մեծ տուրք մը ամէն մարդի մէջ և սատարած լայն չափերով անոր վերելքին ու փառքին :

Երբ Մեծն Կոստանդիանոս որոշեց, Վաս-
փորի եզերքին հաստատուած Մեգարացի-
ներուն աւանը իր մայրաքաղաքը դարձնել,
հոն տարաւ բազմաթիւ յոյն և հայ գործա-
ւորներ, քարակոփներ, վարպետ որմնադիր-
ներ և ճարտարապետներ, մայրաքաղաքը
շինելու համար:

Այդ թուականներուն, արդէն մեծ համա-
բաւի տիրացած էին յոյն և հայ որմնադիր-
ները ու քարակոփները, որոնք շատ փընտ-
ռուած էին ամբողջ փոքր Ասիոյ մէջ մինչեւ
Պարսկաստան ⁽²⁾ :

Բիւզանդիոն եկած այս տառալին հայերուն
յաջորդեցին ուրիշներ դարէ դար: Արդէն
Զ-որդ դարուն կը գտնենք զանոնք ակնառու
շիրքերու վրայ: Մեծն Յուստինիանոսի նշա-
նաւոր զօրավարը՝ ներքինի (3) Ներսէսը հայ
մին էր: Ասոր յանձնուած էր կայսրութեան

փոքր ասիացիներ են, Բիւզանդիոնի զրեթէ ամբողջ
 բարձր դասը կազմուած էր փոքր ասիացի հողատէրներէ,
 ասիւքանները, տաւաւաճները, բարուցիկները եւյլն, եւյլն։
 Նոյն իսկ բիւզանդական զիւրազներըգութիւնը կը ներ-
 շնչուէր արեւելեէն, Տեքէնիս Աբըրիան՝ մեր Սասունցի
 Դաւիթիկն համարժէքը՝ Բիւզանդիոնի համար փոքր
 Ասիական մըն է։

2. Փառաոս Բիզանդացի Կ. Վ. Էնեանիկ 1950, էջ 100-101:
3. Բիզանդական ներքինին, այժմու՝ կանանոցի պատմության՝ իմաստով պէտք է հաշտել: Այն դարերուն, ներքինաւոր մասնաւոր առաւելութիւններ կը ներկայացնէր և մասնաւոր հանրային պաշտօններու մէջ մեծ յարգ ունէր:

արեւելեան շրջանի բանակներուն ընդհանուր սպարապետութիւնը:

Արդէն ամբողջ Է-րդ դարը բիւզանդիոնի գահը կը գրաւէ հայ գերդաստան մը, Հէրակեանը: Թ-րդ դարուն սկիզբը կը գրտնենք Լեւոն Ե. հայկազնը (813-820), նոյն դարու առաջին կիսուն կը գտնենք նաեւ կայսրուհի Թէոդորան (829-842) մամիկոնեան գերդաստանէն ⁽⁴⁾: Մինչ Թէոդորա կայսրուհի էր, իր հօրեղբայրը Մանուէլ Մամիկոնեան բիւզանդական բանակին սպարապետն էր: Թ-րդ դարուն վերջին քառորդին է որ բիւզանդական գահը կը բարձրանայ նշանաւոր « մակեդոնական » կոչուած հայ գերդաստանը, Վասիլ Ա. (867-886) կայսրով որ Աւշակունի մըն էր: Եւ իրարու կը յաջորդեն նշանաւոր կայսրերու շարք մը: Երբ հայկազն Ռոմէն Ա. (919-944) կայսր էր և իր որդին Թէոփիլակոսս պատրիարք և Յովհաննէս Գուրգէնն ալ (Քուրքուրաս) ընդհանուր սպարապետ բանակին, կրնանք ըսել թէ ամբողջ կայսրութիւնը կը գտնուէր իր քաղաքական, կրօնական և զինուորական վերին իշխանութիւններով ամբողջութեամբ հայոց ձեռքը ⁽⁵⁾:

Երբ հայերը սերունդներ շարունակ կը գրաւեն Բելգանդիոնի մէջ առաջնակարգ դիրքեր և կու տան բացի կայսրերէ և զօրաւ լարներէ, գիտուններու և ճարտարապետներու հոյլ մը, որոնց բազմութենէն դուրս կը ցցուին Անանիա Շիրակացին ⁽⁶⁾, Տրդատ ⁽⁷⁾ և Դանիէլ ⁽⁸⁾ ճարտարապետները:

4. Փրոֆ. Ադնյց. «Մամիկոնեան իշխանուհին՝ Բելա զանդական զահին վրայ». յօրուածաշարք Նոր Օրիւն, 11 թիւը 1933:

5. Runciman, Civilisation Byzantine. Payot,
1911.

6. Runciman, շիրակացին կը դասէ բիզանդացի
գիտուններուն կարգը. Civilisation Byzantine, Pa-
vot, էջ 239.

7. Տրդատ շինեց Ս. Սուրբիսայի կործանած գմբեթը՝
 Սյուրբուան գմբեթը անոր շինածն է։

8. Դանիելէ՛, ըստ Սարգիսկոպսեի՛, շինեց Սաւաննայի
մէջ Թէոգորիկի գերեզմանը՝

